

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ (ՎԱՃԱՌՔԻ)

1. Սույն կարգով կարգավորվում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) սեփականությունը հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (սակ էլեկտրոնային) կամ ուղղակի եղանակով օտարելու (վաճառելու) (այսուհետ՝ վաճառք) հետ կապված հարաբերությունները:

2. Կազմակերպության սեփականությունը հանդիսացող վաճառքի ենթակա հիմնական միջոցի (միջոցների) (բացառությամբ անշարժ գույքի) գնահատված արժեքը (արժեքների գումարը) 1 մլն դրամից փոքր լինելու դեպքում հիմնական միջոցի (միջոցների) վաճառքի մասին որոշումն ընդունում է կազմակերպության ղեկավարը՝ կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի համաձայնությամբ: Կազմակերպության ղեկավարի որոշմամբ վաճառվող գույքի գնահատված արժեքը (արժեքների գումարը) յուրաքանչյուր տարի չի կարող գերազանցել 1 մլն դրամը:

3. Եթե կազմակերպության սեփականությունը հանդիսացող՝ վաճառքի ենթակա հիմնական միջոցի (միջոցների) (բացառությամբ անշարժ գույքի) գնահատված արժեքը (արժեքների գումարը) կազմում է 1-5 մլն դրամ, ապա վաճառքի մասին որոշումն ընդունում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը: Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի որոշմամբ վաճառվող գույքի գնահատված արժեքը (արժեքների գումարը) յուրաքանչյուր տարի յուրաքանչյուր կազմակերպության համար չի կարող գերազանցել 5 մլն դրամը:

4. Եթե կազմակերպության սեփականությունը հանդիսացող՝ վաճառքի ենթակա հիմնական միջոցի (միջոցների) (բացառությամբ անշարժ գույքի) գնահատված արժեքը (արժեքների գումարը) կազմում է 5-15 մլն դրամ, ապա վաճառքի մասին որոշումն ընդունում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը՝ պետական գույքի կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) եզրակացությամբ:

5. Եթե կազմակերպությունը կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի համաձայնությունն ստանալուց հետո դիմում է լիազոր մարմնին իր սեփականությունը հանդիսացող գույքը վաճառելու համար, ապա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ներկայացմամբ՝ յուրաքանչյուր միավոր 50 մլն դրամից ավելի գնահատված արժեքով շարժական գույքի վաճառքի մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Իսկ 15-50 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի վաճառքի մասին որոշումն ընդունվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանով՝ կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի առաջարկությամբ:

6. Սույն կարգի 2-5-րդ կետերում նշված յուրաքանչյուր որոշում պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- 1) հիմնական միջոցի գնահատման տարեթվի և ամսաթվի մասին.
- 2) վաճառքի ձևի, վաճառքի գնի, այդ թվում՝ որպես գույքի մեկ միավոր կամ որպես գույքի առանձին տարրեր վաճառելու մասին.
- 3) գույքն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին (որը կարող է նվազեցվել վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի մինչև 20 տոկոս).

4) գույքն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, վաճառքի գնի, վճարման կարգի, վճարման ժամկետների մասին և գործարար (ներդրումային) ծրագրի առկայության մասին (եթե նման պայմանի առկայությունը հիմնավորված է).

5) այլ տվյալների մասին:

7. Սույն կարգի 4-5-րդ կետերում նշված դեպքերում գույքի վաճառքի նպատակով աճուրդը կամ մրցույթը կազմակերպում ու անցկացնում է լիազոր մարմինը, սույն որոշման 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով հաստատված կարգերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ